

ընտրեալք»։ Այո՛, շատերը կը կանչուին, բայց քիչերն են, որ կ'ընտրուին։ Պիտի ուզէի, որ ձեզմէ իւրաքանչիւրն այդ քիչերէն մէկը ըլլար, որպէսզի ինչ որ այսօր հոս ամբարէք, վաղը կարենաք ուրիշին երջանկութեան պատճառ դառնալ՝ ձեր ունեցածէն անոնց բաժին հանելով եւ տալով։

Յաւարտ խօսքիս, յատուկ շնորհակալութիւն կը յայտնեմ երեք դասախօսներու՝ Պրն. Պետիկ Լէփէճեանին, Օր. Ֆրանսուօի Աւագեանին եւ Տիկ. Սամար Մուսարսային, Վարժարանին մէջ իրենց երկարամեայ աշխատանքի եւ համագործակցութեան համար։ Նոր ուսումնական տարուան մէջ խիստ զբաղած ըլլալուն պատճառով երեք դասախօսներն ալ իրենց յօժար կամքով կը թողուն Վարժարանը։ Ուստի՝ անոնց կը մաղթենք առողջութիւն եւ կենաց արեւշատութիւն։

Թող Աստուած ամուր պահէ եւ պահպանէ Սուրբ Աթոռը, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ Ժառանգաւորաց Վարժարանը եւ Ընծայարանը յաւիտեանս յաւիտենից։

ՏԱՃԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Խօսք մը կրնայ կռիւի եւ նոյնիսկ պատերազմի դուռ բանալ, իսկ խաղաղութեան դառնալու հազար խօսքն անգամ քիչ է։

Պատիւը նման է թանկարժէք քարին, որուն վրայ փոքրագոյն բիծն անգամ կը նուազեցնէ արժէքը քարին։

Միտքը միշտ սրտին զոհն է. ամէն անոնք որոնք իրենց միտքը լաւ գիտեն, չեն ճանչնար իրենց սիրտը։

Ազատութեան արժանի չէ այն անձը, որ իր հակառակորդներուն չի կամենար այնքան ազատութիւն, որքան իրեն։

Կեանքը վարդ մըն է՝ որուն իւրաքանչիւր թերթը պատրանք է, իսկ իւրաքանչիւր փուշն ալ՝ իրականութիւն։

Յիմարին խրատ տալը կը նմանի կոյրին հայելի տալուն։

Հովը կը մարէ մոմը, բայց կը բորբոքէ խարոյկը։

Անկարելի է ձանձրացնել կին մը, անոր հետ զրուցելով իր լաւ բնաւորութեան եւ գեղեցիկ արտաքինի մասին։

Թոյլին նկատմամբ տարած յաղթանակը հաւասար է պարտութեան։